ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ փետրվարի 8-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Սիսիան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 24 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասը, աշխատանքի տեղավորման՝ երկու, վնասված և վթարային շենքերի վերանորոգման՝ չորս, շենքի տանիքի վերանորոգման, պատերազմի ժամանակ գյուղտեխնիկայի կորստի, բնակարանի սեփականաշնորհման, արտերկրում երգի փառատոնին երեխայի մասնակցությանն աջակցելու, հոսանքի կարգավորման, պատերազմի մասնակից որդու ուսման վճարի զեղչման, դիպուկահարների դպրոցին աջակցելու և ,,Արև,, ՀԿ-ի հետ համագործակցության հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության տասը դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են վնասված և վթարային շենքերի վերանորոգման, շենքի տանիքի վերանորոգման, պատերազմի ժամանակ գյուղտեխնիկայի կորստի, բնակարանի սեփականաշնորհման, արտերկրում երգի փառատոնին երեխայի մասնակցությանն աջակցելու, հոսանքի կարգավորման, պատերազմի մասնակից որդու ուսման վճարի զեղչման, դիպուկահարների դպրոցին աջակցելու և ,,Արև,, ՀԿ-ի հետ համագործակցության վերաբերյալ դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարան